


3414

Quinapht 4.

Quinaphtay



Fuji  
1910

8.792-3

2-15

4163

Ա. 20.1.0.6.6

# ՂԱՐԱԳԵԶ

2004

Խ. ՉԱԼԱԲԻ

ԿԱՐԱԳԵԶ

ԲԱԳԻ, ՏՊՀՐԱՆ, „ՏՐՈՒԴԻ“  
БАКУ, ТИПОГРАФИЯ „ТРУДЪ“.

1910

Ա. Զ. Ա. Ա. Բ.

792

9-15

# ՂԱՐԱԳԵՂ

(Արտասան „Թատրոն և երաժշութիւն“ հանդիսից).

1001  
3217



Քաղաք, սպառավի „Տրուդ“.

## ՂԱՐԱԳԵՕԶ

---

Թատրոնի կատարած դերը ժողովրդի  
կուլտուրական և մտաւոր զարգացման խնդրում  
անուբանալի է: Դա իր կրթիչ, զաստիարա-  
կիչ ռոժով կուել-կովել է շատ ժողովուրդների  
հոգեսր ու մտաւոր կետնքը:

Բայց եղել են և մինչև այժմ էլ դեռ կան  
ազգեր ու ժողովուրդներ, որոնք զուրկ են մնա-  
ցել թատրոնից. կան և այնպիսիները, որոնք  
թատրոնի էութեան հիմնական ըմբռնմանը  
դեռ չը հասած՝ թատրոնը ընդունում են որ-  
պէս լոկ գւարճութեան վայր:

Ոհա հէնց այդպիսիների մէջ, դեռ հին  
ժամանակներից, միշտ եղած են ծաղրածու-  
ներ, խեղկատակներ, որոնք իրենց սրախօսու-  
թիւններով ու խեղկատակութիւններով զբա-  
ղեցրել են գւարճասէր հասարակութեանը:  
Նրանք թէպէտ և զուրկ որկ է կրթիչ իւմօ-

թից, այնուամենայնիւ կտրսղանում էին գրաւել հանդիսատեսների ուշադրութիւնը: Որտեղ հանդէս, ճաշկերոյթ, ինչպար էր լինում, այդ ձրիակերները՝ որոնց գործեան միակ աղբիւրը դա էր կազմում, իրենց սրախօսութիւններով հանդէս էին գալիս այնտեղ:

Եկաւ ժամանակ, երբ հասարակութիւնը գոհացում չէր ստանում միշտ կրկնաւող, միենայն տափակ ու անճաշակ սրախօսութիւններից, որոնց մէջ երբէք փոփոխութիւն չէր լինում: Կամաց-կամաց ժողովուրդը սկսեց սառն վերաբերել դէպի այդօրինակ զւարճութիւնները, իսկ ծաղրածուները լաւ ըմբռնելով, որ գրանով վերջ է գրւելու իրանց գործունէութեանը, փորձեցին մի ուժեղ փոփոխութեամբ վերանորոգել իրենց—այսպէս ասած—ըեպերտուրը, և սկսեցին իրենց շրջապատի մէջ փոքր ի շատ է աշքի ընկնող մարդկանց ներկայացնել զանազան ծաղրական ու կրիտիկական գրութեամբ: Դրանով նրանց յաջողւեց վերստին գրաւել հասարակութեան ուշադրութիւնը և ամրապնդել իրենց գիրքը: Իոկ աւելի սրամիտ-հնարագէտները քիչ հեռուն գնացին, նրանք սկսեցին զանազան իրեվին ցանկացած անձնաւորութիւնների անունները տալու խաղացնել—օրինակ, բահը՝ հոգեօրական, ցա-

խաւելը՝ գատաւոր և այլն... Բայց յետագայում, կամաց-կամաց առարկաններն ու իրերը տեղի աւին «մանրիկ մարդկանց»՝ անշունչ կերպարանքների:

Ահա հէնց այդ ժամանակներում է ծնունդ առնում «Ղարաբեզօղ»-ի նախատիպարը: «Ղարաբեզօղ» ծագումը բաւական հին է:

«Ղարաբեզօղ» բեմը, (եթէ միայն կարելի է այսպէս անուանել), իրենից ներկայացնում է բարակ կտաւով պատած արկղի նման մի բան, որի ներսի կողմում շարժւում են մարգանման փոքրիկ կերպարանքներ: Դրանք պատրաստում են կենդանիների թափանձիկ թաղանթից ու ներկւում զանազան գոյներով: Նրանք լուսաւորում են բեմի կտաւի յետեի կողմից. զբանց ստերը, որը նման է շինական ստերին, ընկնում է բեմը պատած պատկերացոյց կտաւի վերայ:

Պէտք է նկատել, որ զբանց ձգած ստերները միայն սևագոյն չեն լինում, որը առանձնայատուկ է շինական ստերին, այլ ընդհակառակը, նրանք ստանում են և ամենապայծառ զոյն՝ չնորհիւ այն բանի, որ կտաւի յետիում լոյսի ուժեղ աղբիւր կայ, որի ճառագայթները անցնելով գոյնզգոյն թափանձիկ

ֆիզուրաների միջով, կտափ վրայ գունաւոր  
սուերներ են առաջացնում:

Բեմ շեղած դէպքում, յաճախ սենեակի մի  
անկինում պատրաստում են վարագօյր և խա-  
զացնում առատ լոյսի տակ:

«Ղարագիօղի» խումբը բաղկացած է մի  
քանի գործող անձերից. նրանց թիւը կախում  
ունի խաղացնողի միջոցներից, որովհեան ա-  
մին մի զայգ գործող անձանց խաղացներու  
համար անհրաժեշտ են մի զոյտ ձեռքեր, իսկ  
եթէ շատ են գործող անձինք, գրա համար  
անհրաժեշտ է օգնական: Յամենայն գէպս, որ-  
պէսզի ներկայացումը կայանայ, անհրաժեշտ են  
առնւազն չորս գործող անձինք՝ Ղարագիօղ,  
Հաջի-բազ, բարի հայր և Զայ-բէզ: Պատահում  
է երբեմն, որ գրանց թիւը աւելանում է մի  
քանիսով, որոնց մէջ ինում են և կանայք,  
ի միջի այլոց և ընտանի կենդանիներ:

«Ղարագիօղը» նման է ռուսական Պետրոց-  
կային: Նա յիմար է, բայց սրիկայ և կեղծա-  
ւոր. Նա իրենից ներկայացնում է հասարակ  
գառակարգից վերցրած մի բնորոշ տիպ: Ռու-  
սական Պետրոչկան, նէապօլիտական Պուլի-  
նէլոն, հռոմէական Մէտապատկօն, բոլոնական  
Արէկին, ֆրանսիական Պօլիչինել, Լեօնեսպինոլ,

անգլիական Պէլիչն, պարսկական Քաշտլ-Ահ-  
մաղն, հայկական Պըլ-Պուղին ու թիւբքական  
Ղարագիօղը չափազանց նման են միմիանց:  
Ղարագիօղի ներուները զուրկ են կրթութիւ-  
նից, կոսլիս ու գուենիկ են: Երանք եսասէր  
են, իրենց շահները շատ բարձր են դասում,  
քան թէ նրանց որոնց մօտ ծառայում են ի-  
րենք: Ուտել-խմել, գլարճանայ, —ահա նրանց  
ամենօրեայ զրագմունքը: Բացառութիւն է  
կազմում միայն Ղարագիօղը, որին թէպէտե  
Ղուրանը արգելում է գինի խմել, սակայն նա  
զինու փոխարէն օդի է զութածում\*):

Թիւբքալան Ղարագիօղները միջոցների  
մէջ ոչ մի խարսթիւն չեն զնում: Նրանք կո-  
ղովասում են իրենց մերձաւորին, կուռում, ծեծ-  
ւում են, աչք են անկում հարեանի կնոջ, աղ-  
ջկայ վրայ, պարծենում են իրենց ստով ու  
կեղծիքով, —մի խօսքով նրանք սրբապղծում  
են ամեն ինչ. բայց այնուամենայնիւ, էականն  
այն է, որ նրանք ամենքը բարեսիրտ ու երկ-  
չոր արարածներ են. բնաւորութեան այդ վեր-  
ջին յատկութիւնով է որոշ չափով բացարձում  
նրանց պարզամտութիւնն ու կեղծաւորութիւնը:

\* ) Մի բանի տեղեկութիւններ բաղել ենի „Տ. և Ա.“  
հանդիսից:

Միայն անգլիական Պէյնչը ու Ղարագեօղը շափադանց վաւաշոտ, հեշտառէք և միենոյն ժամանակ անպարկեցտ են... Արտաքին կրօնականութեան մէջ, Ղարագեօղը չի ճանաշում և ոչ մի սրբութիւն: Նա ամեն բանի վրայ դնում է իր ստոր զգացմունքների կնիքը: Նա հասարակութեան ծիծաղը շարժում է ոչ թէ սրբամատութեամբ, այլ կեղտոտտութիւններով ու անպարկեցտ երգիծանքով: Նրան շատ մեծ բաւականութիւն է պատճառում՝ աշքի ընկնող անձանց ծալքական կերպով նմանելը, բայց նրա ամբողջ խաղի աղը կազմում է ոչ թէ սրախօսութիւնը, այլ ամենազազիք ու անպարկեցտ գործողութիւնը՝—ձեերն ու դիբերը:

Ղարագեօղը ճաղատ է՝ ինչպէս ֆրանսիական Պոլիշինելը, սապատաւոր՝ անգլիական Պէյնչի պէս, կերպարանքը զգուելի ու ծիծաղշարժ, իսկ հագուստը միայն բուռն ծիծաղէ առաջացնում:

Ղարագեօղի բարեկամներն ու գործակիցներն են՝—

Հաջիբազը, որը մի շատ խորամանկ անձնաւորութիւն է; Նա շատ բան գիտէ, շատ բան է տեսել, կարգացել և ուսումնառիրած է և ամեն ինչից գաղափար ունի, և դատողութիւն-

ներ է անում: Նա աւելի հարադատ է պատկերացնում բանաստեղծներին, քան նրա ճաղատ ու սապատաւոր ընկերը: Եւ քանի որ նա ամեն ինչ իմանում է, հապա ուրեմն նրան քաջ յայտնի է և մարդկային սիրտը:

Երբ Ղարագեօղի գործերը վաս ընթացք են ստանում, նա դիմում է Հաջիբազին, որի սրբադան պարտականութիւնն է օգնել ընկերոջը և հանել նրան նեղ կացութիւնից:

Բայց Հաջիբազը յիմար չէ: Ղարագեօղին ծիծում են, նա հաղար ու մի տանշանքների է ենթարկում, իսկ այդ ժամանակ Հաջիբազը անհոգ դրօնում է՝ լի հաւատով դէպի իր բաղդաւոր աստղը:

Մակայն Հաջիբազին երբեմն ծիծում է և ինքը Ղարագեօղը, որին կարծես անյայտ ժամանակներից վեր արտօնութիւն լինի տրւած՝ խեղճ գիտնական Հաջիբազին ծիծելու, և Ղարագեօղը ուրիշների վելքը դրանից է ամսում, իր զայրոյթը նրա զլիմին թափում ու անխնայ ծիծում է:

Գործող անձերից մէկն էլ մի բարի հայրէ, —որին, ըստ խաղացնողի ցանկութեան զանազան անուններ են տրւում, օրինակ—Ալի, Մուսատափա, երբեմն էլ Մէմէ: Այդ դժբաղալը

իրենից ներկայացնում է պատմական մի ախմաբ  
տիպ: Այդ ծերունուն խարում, ծեծում են,  
բայց նա միշտ գոհ է և լնքնաբաւական:

Խմբի կարեւոր և անհրաժեշտ դերակատար-  
ներից մէկը ես ԶԼ-ըէզն է, որը նոյնպէս մի  
քանի անուններ ունի—Մուսատափա, Բաշի-բօ-  
զուկ—(բառացի—«խելագար գլուխ»): Դրա մա-  
սին կարելի է ասել, որ վերին ասահճանի  
պարզամիտ է ու համարձակ, և թէպէտ շա-  
փազանց խորամանկ է, բայց ատելով-ատում է  
կեղծիքն ու անբարոյականութիւնը: Ներկայաց-  
ման ամբողջ ընթացքում նրան խարում են և  
միայն վերջում՝ այնուամենայնիւ նա է յաղ-  
թանակով:

Այդ չորս գործող անձիք կազմում են խմբի  
կարեւոր ուժերը: Խոկ միւս՝ երկրորդական դե-  
րակատարների մասին կարելի է ասել, որ  
նրանք միայն անսամբլն են պահպանում, բայց  
մի թեթև վարքի տէր կնօջից, որը միշտ դրանց  
կոռուպտածառն է լինում:

Պիէսայի բովանդակութիւնը կազմում է  
զլիմաւորապէս սիրային ինտրիկներ, բայց  
որոնք ոչ մի կապ չեն ունենում միմեանց հետ:

Գործող անձննք ներսի կողմից միշտ ամ-  
բացըւած են լինում բարակ ձողերի վրայ,

որոնց օգնութեամբ խազացնողը դիւրութեամբ  
շարժողութեան մէջ է ձգում դերակատարնե-  
րին՝ ըստ իր ցանկութեան, և միենոյն ժամա-  
նակ նա մի քանի անսակ փոփոխութիւնների է  
ենթարկում իր ձայնը և խօսում է ներկայաց-  
ւող տիպի առանձին ձայնավ ու խօսքերով:

Այն շինութիւնները, որտեղ տրւում են այդ  
ներկայացումները, տաղտակապատ, դատարկ  
չէնքել են, և յաճախ նման ուստական բալա-  
զաններին, ուր մուտքը վճարովի է: Մի քա-  
նիսը բացի չըջանաձկ նստալաններից ունեն  
գալիքելա և օթեակներ: Փոքրիկ քաղաքնե-  
րում աբդպիսի ներկայացումները տրւում են  
սրճարաններում ու թէյատրներում, ուր յաճա-  
խորդները ոչինչ չեն վճարում, այլ միայն սուրճ  
կամ թէյ են գնում: Բայց նախքան ներկայաց-  
ման վերջանալը, սրճարանի սպասուորներից  
մէկը առնում է մի ափսէ և սկսում է հասա-  
բակութեան մէջ շրջել ու յօգուտ խազացնողի  
ժողովարաբութիւն անել:

Գիւղերը ևս յետ չեն մնում քաղաքից: Այս-  
տեղ ես կան թափառական զարագեօզիներ,  
որոնք իրենց բոլոր բեմը—կտաւը և թատերա-  
կան ամբողջ խումբը լցրած խուրջինի մի պար-  
կի մէջ՝ գիւղից-գիւղ են շրջում:  
Գիւղերում դրանց աւելի մեծ պատիւ ու

յարգանք է արւում, և զրանք են լինում հանդէսների ու խնճովքների կատակարան—ծաղրածուները:

Ներկայացումը առանց միջնադադարների տեսում է մօտաւորապէս երկու ժամ: Ներկայացման սկզբում և վերջում շրջիկ երաժիշտները սաղերի նուռագակցութեամբ զանազան դիւցադներգութիւններ են երգում:

Այդպիսի ներկայացումների իսկական բոյնը կազմում է ամբողջ Թիւրքիան, ուր շատ է տարածւած այդ ձեռք ժողովրդական թատրոնը, իսկ առանձնապէս Կ.-Պօլսում՝ Թօվիխանէ և Ստամբուլ կոչւած արուարձաններում:

Կովկասն էլ յետ չի մնացել իր հարեան Թիւրքիայից և փախ առնելով այդ թատրոնը տեղափոխել է Թիֆլիս, ուր մինչև այժմս էլ մեծ յաջողութեամբ գործում է, բայց կորցրած ունենալով հասարակութեան նախկին յարգանքն ու փայն, նա օրբատօրէ սկսում է կորցնել և իր գրաւչութիւնը՝ իր գէմ ունենալով այնպիսի զուարծութիւնների վայրեր և հանրամատչելի թատերական ներկայացումներ, ուր գըլխաւորապէս յաճախում է բացառապէս միջակ և սառըին դասակարգը: Բայց երբեմն էլ Զարագիոշուն հրաւիրում են բագր և Յա-

թում: Կովկասում չկայ այդ ձեփ ներկայացումների համար մշտական բեմ՝ այլ շարժական է և ներկայացումները արւում են զլխաւորապէս զանազան բազմամարդ թէյատներում և սրճարաններում: Այդ ներկայացումները արւում են ամեն օր, իսկ Ռամազանի տօներին համարեա ամբողջ գիշերներ:

Իսկ ովքեր են լինում այդ ձեփ ներկայացման յաճախորդները: Գերակշռում է գլխաւորապէս հասարակ դասակարգը՝ զինուորներ, փողոցային շրջիկ արետրականներ և խանութպաններ, որոնք ցերեկւայ յօդնածութիւնից յետոյ ժողովում են այնաեղ և մեծ հաճովքով հետեւում ներկայացման ու դառն սրճի ըմպումով ժամանակ են անցկացնում:

Իսկ աւելի հետաքրքիրը այն է, որ կանայք, որոնց մուաքը արգելած է այդ ներկայացումներին, բայց նրանք ևս յետ չեն մնում և դարագեօզչուն իր թատրոնով իրենց մօտ են հրաւիրում:

Կանանց համար էլ նոյն պիէսներն են ներկայացում, ինչ և առհասարակ արձարաններում տղամարդկանց համար, որովհետև բացի սովորական բեպերտուարից էլ ուրիշ բան չունեն, իսկ ունեցածն էլ բացի ստոր ու զազիր ին-

տրիգներից, վայրենի ու անասնական կրքեր բռնկեցնող բաներից, ուրիշ բան չեն պարունակում իրենց մէջ։ Ծածկուած զափառաների յեսեց կամ տախտակապատճեցի տակից, որևէ մեծանուն մարդու օրինական կանայք ու ստրկուանիները լուրջ հետաքրքրութեամբ նայում են ներկայացման, բուռն ծափահարութիւններով վարձատրելով գոէհիկ Դօն-Ժուանի քաջագործութիւնները, որը վայելում է նրանց առանձին համակրանքը։

Թիւրքական նախկին բէժիմի ամբողջ լնթացրում այդ ձեր ժողովրդական թատրոնը սկզբից ի վեր ոչ մի փոփոխութեան չէր ենթարկել և պահպանել էր իր գոէհիկ ու անպարկեցա տեսարանների ամբողջ ժողովածուն բայց հին բէժիմի տապալումով, ցիրուցանեղու և դարագիօզական թատրոնի ըեպերտւարը, և սահմանադրութեան հետ միասին դաէլ սկսեց փոխել իր կերպարանքը ու սկսեց արձագանք տալ օրւան շարիքին։



## ՄԵՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Լոյս է տեսել եւ վաճառուում է

«ԾԱՂԻԿՆԵՐԻ ՄԷԶ» կօմեդիա 2 արարածով,  
Կ. Լուկաշեվիչ, գինն է 12 կօպ.

Թարգմանուած ու պատրաստեան տեսագրութեան համար

«ՀԱՅՐԸ»—դրամա 3 արար., Ա. Ասրինբերգի.

«ՍՈՐՍՍՓԵԼԻ ԸՆՏԱՆԻՔ»—դրամա 3 արար.  
Ա. Ասրինբերգի.

«ՏԻԿ. ՈՒՄԲԵՆԻ ԱԲՀԵՍՏԸ»—պիես 4 արար.  
Բ. Շուպի.

«ԹԱՐՄԱՐ ԹԱՐԴՈՒՀԻ»—դրամա 5 արարածով,  
Կ. Համսունի.

«ՎԱՐԴԵՐ»—պիես 4 արար. Հ. Զուղերմանի.

«ԿԱՅԵՆ»—դրամա 3 արար. Օ. Դրմովի.

«ԳԻՇԵՐ»—դր. եղիւլ 2 ար. Վ. Գրուբիսկի.

«ՆԵՐՔՆԱՍԱՆՆԸ»—դրամա 1 ար. Լիսիցինի.


«ԳԻՇԵՐ»—դրամա 1 արար. Ա. Ավետյովի.

«ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՇԵՐՆԵՐ»—պիես 1 արար.  
Գ. Գէի.

«ԹԱՆԳԱԳԻՆ ՀԱՄԲՈՅՐ»—վօդեւիլ 1 արար.  
Ո. Զինարովի.

«Պոկառութեան գուշակ»—կատակ 1 ար. Կ. Տրենեվի-





3414

ԳԻՒՆ Է 5 ԿՈՊ.

ՀԱՅՏԱՐԱՐ

2013



